ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/95

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2024 թ. N 95

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի

Գործունեության հասցեն՝ ք. Երևան, Արմեն Տիգրանյան 21

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. փետրվարի 15-ին քննարկեց «Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԵՊՀՏՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	17 հունվարի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում	19 մայիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	03-07 հուլիսի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	10 հոկտեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	30 նոյեմբերի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հասարակական պատասխանատվություն» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԵՊՀՏՔ-ն իրականացնում է իր առաքելությանը համահունչ և ՈԱԾ-ին համապատասխանող մասնագիտական կրթական ծրագրեր: Քոլեջում. սակայն բացակայում են ՄԿԾ-ների ամբողջական մասնագրերը: Մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ապահովման նպատակով կիրառվում են ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող դասավանդման և ուսումնառության բազմապիսի մեթոդներ, սակայն տարբեր ՄԿԾ-ներում դրանց ընտրության սկզբունքները միասնական չեն: Քոլեջը կարևորում է կարողություն-հմտություն բաղադրիչը, ուսումնառության վերլուծական և հետազոտական տարրերի զարգացումը: ՄԿԾ-ների ամփոփիչ ատեստավորման պետական քննություններում ներդրվել են նաև գործնական աշխատանքներ, նպատակ ունենալով գնահատել ուսումնառության ընթացքում ձեռք բերված հետազոտական, վերլուծական և այլ գործնական կարողությունները, թեև դրանց գնահատման սկզբունքները դեռ մշակված չեն:

Քայլեր են ձեռնարկվում ՄԿԾ-ների որակի մշտադիտարկման, գնահատման և վերանայման համակարգի կայացման ուղղությամբ:

ԵՊՀՏՔ-ն կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող կայուն դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմ: Առկա է դասախոսական անձնակազմի ընտրության կարգ, սակայն բացակայում է նրանց մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտական մոդուլների:

Դասախոսական կազմի կայունության ապահովման համար Քոլեջը ձեռնարկում է երիտասարդ կադրերի ներգրավման և առաջխաղացման հստակ քայլեր: Ներդրվել է դասախոսական կազմի գործունեության գնահատման և խրախուսման մեխանիզմներ:
Տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացվում են դասախոսական կազմի վերապատրաստումներ, որոնք հիմնականում մեթոդական բնույթի են:
Ներկայիս նյութատեխնիկական հագեցվածությունը բավարարում է մասնագետների պատրաստման համար, սակայն աշխատաշուկայում պահանջված նոր մասնագիտությունների ներդրման համար պայմաններ չկան:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը***

ԵՊՀՏՔ-ն ունի Ռազմավարական ծրագիր, որն արտահայտում է հաստատության զարգացման հիմնական ուղղությունները, համապատասխանում է Քոլեջի առաքելությանն ու ՀՀ ՈԱԾ-5-րդ մակարդակին: ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը հիմնականում բխում է Ռազմավարական ծրագրում սահմանված նպատակներից և խնդիրներից:
Քոլեջում ռազմավարական կառավարումը դեռևս հիմնված չէ առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա, չեն իրականացվում նախորդ ՌԾ-ների արդյունքների և հաշվետվությունների վերլուծություններ: ՄՈՒՀ-ում տարբեր վարչակազմակերպական օղակների ու ստորաբաժանումների միջև կապը համակարգված չէ և թույլ է դրանց համագործակցությունը: Ստորաբաժանումների կանոնակարգերը ոչ միշտ են համապատասխանեցված ՄՈՒՀ-ի կառուցվածքային սխեմային: Արտաքին ու ներքին շահակիցների կարիքները հիմք չեն հանդիսանում կառավարչական որոշումների կայացման համար: ՊԻԳԲ շրջափուլը դրված չէ կառավարման գործընթացների հիմքում:
Քոլեջում Որակի ներքին ապահովման գործընթացները մեկնարկվել են 2021 թ.-ից, սակայն մինչ 2023 թ.-ը կառույցը գրեթե գործունեություն չի ծավալել:
Որակի ապահովման համակարգը կայացած չէ, դեռևս գտնվում է ներդրման մեկնարկային փուլում: ՈՆԱ գործընթացները պարբերական բնույթ չեն ունեցել, առկա չէ օբյեկտիվ տվյալների հավաքագրման գործիքակազմ: Ներքին և արտաքին շահակիցները ամբողջությամբ ներգրավված չեն ՈԱ գործընթացներում:
Քոլեջը մշակել է ՈՆԱ գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, սակայն քայլերը սահմանափակվել են հիմնականում պլանավորմամբ՝ առանց կատարողականների:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը***

ԵՊՀՏՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ: Գրանցվել է ուսանողների թվի աճ: Ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով ստեղծված է Ուսանողների կրթական կարիքների վերհանման ուսանողական հանձնախումբ: Գործում է կուրսղեկների ինստիտուտը: Ուսանողներին

տրամադրվում են վերլուծական և քննադատական մտածողությունը զարգացնող հետազոտական աշխատանքներ:

Քոլեջը որոշակի քայլեր է ձեռնարկել հետազոտական, ստեղծագործական միջավայր ստեղծելու ուղղությամբ: Քոլեջը սահմանել է հետազոտական գործունեության իր հավակնություններն ու ուղղությունները, իրականացնում է միջոցառումների երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորում:

ԵՊՀՏՔ-ն մշակել է հետազոտական գործունեության իրականացման ընթացակարգեր՝ համապատասխան կանոնակարգեր և մեթոդական ցուցումներ: Քոլեջն ունի հետազոտական աշխատանքներ կատարելու մասնագիտական ներուժ, ինչպես նաև ՊԴ կազմի և ուսանողների կողմից հետազոտական աշխատանքներ կատարելու դրական փորձ: Աշխատում է հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցման, հետազոտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների բարելավման ուղղությամբ:

Քոլեջում սահմանված ներքին հաշվետվողականության համակարգն ունի զգալի բովանդակային թերություններ, չի գործում վերևից ներքև հաշվետվողականության ապահովման սահմանված համակարգ, ստորաբաժանումները տեղեկացված չեն մեկը մյուսի կատարած աշխատանքների մասին: Չկա միասնական, հստակ մոտեցում հաշվետվությունների կազմման վերաբերյալ, որպես հաշվետվությունների պարտադիր բաղկացուցիչ մաս՝ սահմանված չէ վերլուծական և քանակական տվյալների ներառումը: Հասարակության առջև Քոլեջը հաշվետվողականություն չի ապահովում, ապահովված չէ գործընթացների թափանցիկությունը: Հետադարձ կապի մեխանիզմները դեռևս սաղմնային փուլում են: Հասարակության լայն շերտերին արժեքներ չեն փոխանցվում:

ԵՊՀՏՔ-ում դեռևս մշակված չէ միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման գործընթացները կանոնակարգող քաղաքականություն և հստակեցված չեն համապատասխան ընթացակարգերը, սակայն նախապատրաստական աշխատանք տարվել է: ՄՈՒՀ-ն ակտիվորեն զարգացնում է իր համագործակցությունը տեղական ոլորտային հեղինակավոր ընկերությունների, պետական հաստատությունների և բուհերի հետ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:

Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հասարակական պատասխանատվություն» և «Որակի ներքին**

ապահովման համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - ՄԿԾ-ների մասնագրերի մշակման անհրաժեշտությանը,
   - ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականության և ընթացակարգերի բարելավմանը,
   - գործող գնահատման համակարգի լրամշակման անհրաժեշտությանը,
   - դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ սահմանելու անհրաժեշտությանը,
   - համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիաների ստեղծմանը, գրադարանային ենթակառուցվածքի բարելավմանը,
   - միջազգայնացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ակտիվացմանը, ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը,
   - բոլոր ուղղություններով գործատուների հետ համագործակցության շրջանակի ընդլայնմանը և ակտիվացմանը,
   - ընտրովի դասընթացների կազմակերպման համակարգի վերանայմանը,
   - դասախոսների վերապատրաստումների կազմակերպմանը,
   - քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ.փետրվարի 15
ք.Երևան